Թումբանեէրը շատ լայն էին, երբեմն 8—10 մետր կտորի լայնքից կարված։ Սիրում էին կուրծքը բազմաթիվ դրամներով զարդարել, որպեսզի քայլելիս զընգզընգան— մնացորդ ասիական նախկին հայրենիքից բերած սովորության, որտեղ զնգզնգոցին վերագրվում էր չարքերից պաշտպանական և ընդհանրապես մագիկ նշանակություն, օրինակ շամանների՝ կախարդների զգեստավորության մեջ։

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԶԳԵՍՏ

Իր հիմնական մասերով և ձևով տղամարդու զգեստը շատ քիչ է տարբերվում արևելյան Կովկասի ժողովուրդների արական զգեստից, որն առաջներում տարածված էր սկսած Հյուսիսային Կովկասից և Դաղստանից գրեթե մինչև Ղարադաղ և Արաքսի աջեզրյան շրջանները, մինչև Ուրմիո ավազանը[12]։ Այդ տարազը աչքի էր ընկնում գույների միապաղաղությամբ և խույս էր տալիս ասեղնագործ նախշազարդություններից, որով այնչափ պարծենում էին Հայկական լեռնաշխարհի առավելապես արևմտյան կողմերում բնակվող հայերը։ Նույն տարբերությունը նշվում է նաև կանացի զգեստի մեջ։ Այստեղ բացակայում էին արևմտյան բազմագույն և նախշուն շալվարներն ու բանկոնեէրը, չկային և բազմերանգ գլխարկները՝ արախչինեէրը և լայն ու երկար կտորից մարմնի շուրջը գեղարվեստորեն փաթաթված փարթամ գոտիները, բացակայում էր նաև արձակ, անթև յելակը։ Դրան հակառակ Զանգեզուրի տղամարդու զգեստը ընդհուպ կպչում էր մարմնին, սիրում էին կաշվե գոտիով սեղմ պատել մարմինը, թէվֆէրը նեղ էին, գլխարկը՝ ոչխարի մորթուց կարած, միագույն, լայն նստող փափախն էր։

Տղամարդու զգեստը կազմված էր տակի հալավից՝ շապկից և փոխանից և վրայի արխալուղից, շալվարից, չուխայից և այլ մասերից։

1. Հալավը՝ միշտ սպիտակ, յախան՝ օձիքը ձախից կտրած, որ կուրծքը չերևա։ Բաց մնացած դոշին կուտուր՝ կտոր գցած—հասակավորները մուգ կապույտ, իսկ հարուստները շափաղի-դանավոնզ՝ պսպղին տվող— մի թելը կանաչ, մյուսը՝ կապույտ, մրտէղ կՁրծած՝ միատեղ գործած։ Կրծքի կտրրվածքը արխալուղի տակից չէր երևում։ Օձիքը—դոնզ՝ ուղիղ։ Թէվֆէրը լայն, պաց՝ բաց, առանց կոճակի։

2. Փոխանն էլ կանանց փոխանի նման էր, բայց համեմատաբար ավելի նեղ, նույնպես առջևից հանգուցվող խոնջանավ և ներքևի ծայրերը բաց։

3. Արխալուղը՝ հենց օձիքից կուրծքը բաց մինչև գոտկատեղը, առանց ֆՁրայի։ Կոճակները դայթանից—երեքը՝ գոտկատեղում, երեքն՝ ավելի բարձր։ Գոտկատեղից ներքև, մոտ 30—35 սմ՝ բուզմա արած. այս ստորին մասի համար պահանջվում էր գրեթե չորս անգամ ավելի կտոր, քան թե վերին իրանի մասի համար։

4. Շալվարը լայն էր լինում, ձագը[13] բավականին վեր բարձրացրած,

---

[12] Նույն զգեստի ձևերը կրում են նաև Թերեք և Կուբան գետերի մոտ վերաբնակված կազակները, փոխ առնելով կովկասյան լեռնացիներից։

[13] Շալվարի ներսի կարերի մեջ երկու կողմից գցված կտորը, որը տարբեր շրջաններում տարբեր ձև և անուն ունի։